ՆԱՆԵ ԶԵՅՆԱԼՅԱՆ
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

«ԱՆՁՆԱՅԻՆ ԱՐԺԵՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՁԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հոդվածում ներկայացվում են «արժեք» հասկացության տարբեր մեկնաբանություններն անձի տեսություններում, դրանց ձևավորման գործընթացի խնդիրներն ու յուրահատկությունները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում մարդասիրական և էքզիստենցիալ ուղղություններում անձի արժեքների խնդրին:

Հիմնաբառեր. անձնային արժեքներ, արժեքների համակարգ, արժեքային կողմնորոշում:

Արժեքների նշանակալիությունն անձի և հասարակության կյանքում գիտակցվել է դեռևս անտիկ փիլիսոփաների կողմից: Փորձեր են արվել ձևակերպել մարդու արժեքային կողմնորոշումների ոլորտին առնչվող հարցեր, ինչպես օրինակ՝ կա՞ արդյոք բարձրագույն երջանկություն, ո՞րն է կյանքի իմաստը, ո՞րն է ճշմարտությունը և բազմաթիվ այլ հարցեր (Ի. Կանտ, Հ. Լոտցե, Վ. Վինդելբանդ, Հ. Ռիկերտ, Մ. Վեբեր, Է. Դյուրկգեյմ և այլք):

Արժեքային համակարգն աշխարհի հանդեպ մարդու վերաբերմունքի հիմքն է: «Արժեք» հասկացությունը կիրառվում է տարբեր նշանակություններով, արժեքների խնդիրը քննարկվել է տարբեր գիտակարգերի շրջանակներում և տրվել դրանց սահմանումներ: Սակայն միասնական կարծիք «արժեք» հասկացության սահմանման վերաբերյալ գոյություն չունի: Գրականության մեջ առանձնացնում են «արժեք» հասկացության առավել քան հարյուր սահմանում, որոնցում առաջարկվում են տվյալ խնդրի դիտարկման տարբեր մոտեցումներ և կողմեր: Մեր առջև նպատակ ենք դրել ուսումնասիրել անձի տարբեր հայեցակարգերում անձի արժեքների վերաբերյալ ներկայացվող տեսակետները, ինչը հնարավորություն կտա բացահայտել արժեքների ձևավորման և փոխակերպման հիմնական օրինաչափությունները:

Համաշխարհային հոգեբանության մեջ արժեքների և արժեքային կողմնորոշումների, դրանց հիերարխիայի վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ կան: Հոդվածում ներկայացվում են արևմտյան և ռուս հեղինակների դրույթներն անձի արժեքների վերաբերյալ (Ա. Մասլոու, Վ.

Ֆրանկլ, Կ. Ռոջերս, Է. Ֆրոմ, Գ. Օլպորտ, Մ. Ռոկիչ, Ս. Ռուբինշտեյն, Ա. Լեոնտև, Բ. Անանև և ուրիշներ): Արտահայտելով անձի որոշակի որակներ՝ արժեքային կողմնորոշումը միաժամանակ որոշակի հասարակական նպատակներ իրականացնելու միջոց է: Հասարակության սոցիալ-քաղաքական մտածելակերպն ուսումնասիրելու նորմատիվ-արժեքային մոտեցումն առաջ է գալիս Է. Դյուրկգեյմի, Տ. Պարսոնսի, Մ. Վեբերի, Ա. Մարշալի, Վ. Պարետոյի աշխատանքներից: Երկար տարիներ այդ խնդրով զբաղվել են ամերիկացի գիտնականներ Ու. Թոմասը, Ֆ. Զնանեցկին, Ջ. Միդը: Դրանց հիմքում ընկած է այն պատկերացումը, որ հասարակության զարգացման ու փոխակերպման որոշիչ ուժ է մարդկանց կամ խմբերի նպատակների և հետաքրքրությունների անհամապատասխանությունը: Այս մոտեցման շրջանակներում ուսումնասիրվում է հետաքրքրությունների բնույթի և գործող սուբյեկտի կողմից դրանք գիտակցելու ընդհանուր հիմնարար հարցը: Է. Դյուրկգեյմը կարծում էր, որ հասարակության միավորող հիմքը հասարակական գիտակցությունն է. ընդհանուր հավատալիքները, արժեքները և նորմերը: Ընդհանուր հավատալիքների և զգացմունքների թուլացումն սպառնում է հասարակության ապահինտեգրմամբ, նրա անկմամբ: Հասարակական գիտակցության ուժը, դրա ազդեցությունն անհատի վրա Դյուրկգեյմը պատկերացնում է սոցիալական համակարգի կայունությունն ապահովելու և դրա բնականոն գործառութավորման միջոցով [3]:

Հոգեբանության ոլորտում անձի և հասարակության արժեքների խնդիրը մշտապես կարևոր տեղ է զբաղեցրել՝ դառնալով դրա «բարձրագույն» առարկան (համաձայն Վ. Վունդտի տերմինաբանության): Սակայն անձի արժեքային կողմնորոշումներն առավելագույն նշանակություն ունեն հումանիստական և էքզիստենցիալ հոգեբանության մեջ:

Էքզիստենցիալ հոգեթերապիայի հիմնադիր Վ. Է. Ֆրանկլի տեսության շրջանակներում «իմաստ» և «արժեք» հասկացությունները շատ մոտ են, նա արժեքը սահմանում է որպես համընդհանուր իմաստ, որոնց բախվում է հասարակությունը, այսինքն՝ հասարակության մեծամասնությանը, ողջ մարդկությանը բնորոշ նրա պատմական զարգացման ընթացքում: Վ. Է. Ֆրանկլի կարծիքով այն, ինչ այսօր անհատի կյանքի բացառիկ իմաստն է, վաղը կարող է դառնալ համընդհանուր արժեք, այսինքն՝ արժեքներն իրենցից ներկայացնում են օբյեկտիվացված և ընդունում ստացած իմաստներ, որոնք գտնվել են առանձին անհատների կողմից յուրահատուկ իրավիճակներում: Համընդհանուր արժեքների ընկալումը հեշտացնում է մարդու համար իմաստի ներքին որոնումները, քանի որ տիպական իրավիճակներում ազատվում է որոշումների ընդունումից [13]:

Վ.Ֆրանկլը, ընդհանրացնելով պատմության մեջ հասարակության կամ մարդկության դեմ ծառացած իրավիճակները, առանձնացնում է հավերժական արժեքների կամ իմաստների երեք խումբ.

- ***ստեղծագործության արժեքներ***, որոնք մարդուն թույլ են տալիս գիտակցել՝ ինչ է ինքը տալիս հասարակությանը,
- ***ապրումների արժեքներ***, որոնք թույլ են տալիս մարդուն գիտակցել, թե ինչ է ինքը վերցնում հասարակությունից: Վ. Ֆրանկլի կարծիքով մարդը ձեռք է բերում կյանքի իմաստը՝ ապրելով որոշակի արժեքներ,
- ***հարաբերությունների արժեքներ***, որոնք մարդուն թույլ են տալիս գիտակցել այն դիրքը, որը նա զբաղեցնում է հարաբերություններում, որոնք սահմանափակում են իր կյանքը: Այս արժեքներն էլ իրենց հերթին բաժանվում են երեք կատեգորիայի.իմաստավորված վերաբերմունք ցավի, մեղքի և մահվան հանդեպ [10, c. 299-300]:

Վ. Ֆրանկլի տեսանկյունից միայն արժեքների գիտակցումը բավական չէ անձի կողմից դրանք ընդունելու համար: Արժեքների իմաստավորվածությունը դրանց տալիս է օբյեկտիվ, համընդհանուր բնույթ, մինչդեռ արժեքի սուբյեկտիվ նշանակությունը պետք է ուղեկցվի դրա իրականացման համար պատասխանատվության ընդունումով:

Վ. Ֆրանկլը ուշադրություն է հրավիրում ժամանակակից հասարակությունում առկա և առանձին մարդու կարևորագույն խնդիրներից մեկին՝ «էքզիստենցիալ վակումին»: Մարդկանց կողմից կյանքի իմաստի կորուստը հին արժեքների և ավանդույթների խարխլման, մարդու կողմից իր մշակութային արժեքները կորցնելու հետևանքն է: Իմաստի, պատասխանատվության ճգնաժամը համամարդկային փորձի, վարքի ու գործունեության պատմականորեն հաստատված ձևերի կրողը լինելու անկարողության համար վարձատրությունն է [14]:

Մարդասիրական հոգեբանության ներկայացուցիչ Ա. Մասլոուն անձի արժեքների խնդիրը վերլուծում է էքզիստենցիալ ավանդույթների համատեքստում: Նա ենթադրում է, որ արժեքներն ունեն կենսաբանական և գենետիկ հիմք ու զարգանում են մշակույթի մեջ: Նա առանձնացնում է հոմեոստատիկ արժեքները՝ խաղաղություն, հանգստություն, քուն, հանգիստ, պաշտպանվածություն: Մարդու բնույթը ուղղված է ոչ թե հոմեոստազին, այլ ինքնիրականացմանը, այդ պատճառով նրան բնորոշ է կեցության արժեքներին ձգտելը [3]:

Ա.Մասլոուն առանձնացնում է արժեքների երեք մակարդակ. 1. **համամարդկային**, որոնց հիմքում ընկած են մարդու օրգանիզմի հիմնարար պահանջմունքները, 2. **մարդկանց որոշակի խմբի արժեքներ**, 3. **առանձին անհատների արժեքներ**: Համաձայն Մասլոուի՝ մարդու համար հիմնարար արժեքներ են մարդասիրությունը, հասարակությանը

ծառայելը, մարդու ժողովրդավարական իրավունքը, ընտրության, կյանքի, անձի հանդեպ հարգանքի, փոխօգնության իրավունքը և այլն [5]:

«Ընտրված արժեքներն են իրական արժեքները», - գրում է Ա.Մասլոուն, ընդ որում իրապես ճիշտ ընտրությունն այն է, որը հանգեցնում է ինքնիրականացման: Մարդու կողմից բարձրագույն արժեքների ընտրությունը կանխորոշված է նրա բնույթով, այլ ոչ աստվածային էությամբ կամ մարդու էությունից դուրս գտնվող այլ երևույթներով: Ազատ ընտրության պայմաններում մարդը ինքն է «բնազդաբար ընտրում ճշմարտությունը, ոչ թե կեղծիքը, բարին, այլ ոչ թե չարը» [6]: Խոսելով ներքին «հոգեկենսաբանական» արժեքների բնականության մասին՝ Ա. Մասլոուն ընդգծում է, որ «մարդու ցանկացած բնազդային հակում ավելի թույլ է քաղաքակրթությունից» [6, c. 272]:

Ինչպես և Վ. Ֆրանկլը, Ա. Մասլուն նույնպես շեշտում է արժեքի սուբյեկտիվ բնույթը և անձի պատասխանատվությունը դրանց ընտրության հարցում:

Ա. Մասլոուն առանձնացնում է արժեքների երկու հիմնական խումբ. «***Բ արժեքներ»*** կամ գոյության արժեքներ. սրանք բարձրագույն արժեքներ են, որոնք հատուկ են ինքնիրականացող մարդկանց (ճշմարտություն, բարություն, գեղեցկություն, ամբողջականություն, դիխոտոմիայի հաղթահարում, կենսականություն, բացառիկություն, կատարելություն, լիարժեքություն, արդարություն, կարգուկանոն, պարզություն և այլն): ***«Դ արժեքները»*** (պակասուրդային արժեքներ) ուղղված են ճնշված պահանջմունքները բավարարելուն (խաղաղություն, հանգստություն, քուն, հանգիստ, կախվածություն, անվտանգություն և այլն) [6]:

Կարծում ենք, որ կարելի է զուգահեռներ անցկացնել մի կողմից մարդասիրական տեսության շրջանակներում ներկայացված «Բ արժեքների» և Վ. Ֆրանկլի առաջարկած ստեղծագործության արժեքների միջև, մյուս կողմից «Դ արժեքների» և ապրումների արժեքների միջև:

«Դ արժեքները», որոնք ենթակա դիրք ունեն կամ ինչպես Ա. Մասլոուն դրանք անվանում է «ռեգրեսիվ» արժեքներ, մարդկանց կողմից ընտրվում են «ապրելու համար», հոմեոստազի վիճակին հասնելու նպատակով: Դրանց իրականացումը Մասլոուի խոսքերով «բացարձակ անհրաժեշտություն է» և նախադրյալ է բարձրագույն «Բ արժեքների» կամ «զարգացման արժեքների» «զգալու և գործելու համար» [5, c. 213-214]:

Կ. Ռոջերսի անձի տեսության կենտրոնական հասկացությունը «ինքնությունն է», որը նա սահմանում է որպես «կազմակերպված, շարժուն, սակայն «Ես»-ի կամ սեփական անձի բնութագրերի և փոխհարաբերությունների ընկալման հետևողական հայացակարգային ձևաչափ, և միաժամանակ արժեքների համակարգ, որը կիրառելի է այդ հասկացությանը»

[8, c. 46]: Նրա կարծիքով՝ ինքնության կազմում ներառված են ինչպես «օրգանիզմի կողմից անմիջապես ապրվող», այնպես էլ փոխառյալ, «ինտրոյեկտվող» արժեքներ, որոնք մարդը սխալմամբ կարող է մեկնաբանել որպես իր սեփականը: Կ. Ռոջերսը գրում է, որ «օրգանիզմն է մատակարարում տվյալներ, որոնց հիման վրա ձևավորվում են արժեքային դատողությունները» [8, c. 72]: Նա ենթադրում է, որ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին արժեքները ձևավորվում են կամ ընդունվում, եթե «ֆիզիոլոգիական ապարատի»կողմից ընկալվում են որպես օրգանիզմի պահպանմանը և ամրապնդմանը նպաստող, հենց դրա հիման վրա յուրացվում են մշակույթից վերցված սոցիալական արժեքները» [8, c. 73]: Սակայն Կ. Ռոջերսը նշում է նաև առաջացող ապրումների գիտակցման կարևորությունը որպես արժեքային պատկերացումների հիմք:

Է. Ֆրոմն արժեքները կապում է օբյեկտիվ գործոնների հետ (սոցիալականություն, տնտեսական կյանք), իսկ դրանց ընտրությունը՝ սուբյեկտիվության, ներքին հոգեբանական առանձնահատկությունների: Նա հատուկ ուշադրություն է դարձնում ժամանակակից ինդուստրիալ աշխարհի արժեքների ուսումնասիրությանը (ընդ որում՝ ոչ միայն քննադատության, այլև դրանց որակական փոփոխության դիրքերից), ցույց է տալիս անձնային և հասարակական գիտակցության միջև ներդաշնակությունը վերականգնելը [11]:

Գ.Օլպորտը ենթադրելով, որ անձի արժեքների մեծամասնության աղբյուրը հասարակության բարոյականությունն է, առանձնացնում է մի շարք արժեքային կողմնորոշումներ, որոնք թելադրված չեն բարոյական նորմերով, օրինակ՝ հետաքրքրասիրությունը, բազմագիտակությունը (էրուդիցիան), շփումը և այլն: Բարոյական նորմերը և արժեքները ձևավորվում են և պահպանվում արտաքին ամրապնդման միջոցով: Դրանք անձի նպատակ հանդիսացող ներքին արժեքներին հասնելու միջոցներ են, պայմաններ:

Միջոցների վերածումը նպատակի, արտաքին արժեքների վերափոխումը ներքինի Օլպորտն անվանում է «գործառական ինքնավարություն», որը նա հասկանում է որպես «գիտելիքի կատեգորիայի» դեպի «նշանակալիության կատեգորիայի» փոխակերպման գործընթաց: «Նշանակալիության կատեգորիան» առաջանում է արտաքինից ստացվող «գիտելիքի կատեգորիայի» իմաստի ինքնուրույն գիտակցման դեպքում: Օլպորտը գրում է. «արժեքը իմ հասկացողության մեջ որոշակի անձնային իմաստ է: Երեխան արժեքը հասկանում է, երբ իմաստը նրա համար սկզբունքային կարևորություն ունի» [7, c. 133]:

Անձնային հարաբերությունների սոցիալական միջնորդավորվածության վերլուծությունը կարևոր տեղ է զբաղեցնում նաև ռուսական հոգեբանության մեջ, քանի որ անձը չի կարող դիտարկվել սոցիալական միջավայրից, հասարակությունից անկախ: Լ. Վ.Վիգոտսկին հոգեբանության մեջ մտցնում է «զարգացման սոցիալական իրավիճակ հասկացությունը: Նրա կարծիքով անձի զարգացումը պայմանավորված է անհատի կողմից մշակույթի արժեքները յուրացնելով, որը միջնորդավորված է շփման գործընթացով: Իմաստները և նշանակությունները, առաջանալով մարդկանց միջև հարաբերություններում, մասնավորապես երեխայի և մեծահասակի անմիջական սոցիալական կոնտակտներում, հետագայում ներքնայնացվելու միջոցով ներմուծվում են մարդու գիտակցություն [2]:

Ս. Լ. Ռուբինշտեյնի կարծիքով՝ աշխարհի հանդեպ մարդու վերաբերմունքը նրա կողմից նշանակալի առարկաների, երևույթների, արժեքների առանձնացումն է: Կազմելով որոշակի հիերարխիա՝ արժեքները և պահանջմունքներն ազդեցություն են ունենում մարդու վրա՝ կանխորոշելով նրա վարքը: Քննարկելով երևույթների, մարդկանց, իրադարձությունների իմաստի և նշանակության խնդիրները՝ Ս. Լ. Ռուբինշտեյնն արժեքների գործառույթը համարում էր վարքի կարգավորումը [3]:

Հեղինակի կարծիքով կյանքի ընթացքում տեղի է ունենում արժեքների վերագնահատում, ինչը մարդու կյանքի դիալեկտիկայի, աշխարհի և մարդկանց հետ նրա հարաբերությունները վերակառուցելու օրինաչափ արդյունք է: Արժեքները, նրա կարծիքով, արդիական են դառնում ներքին պայմանների փոփոխության արդյունքում:

Ս.Լ.Ռուբինշտեյնը գրում է, որ արժեքները «բխում են մարդու և աշխարհի հարաբերակցությունից, արտահայտելով այն, ինչ կա աշխարհում, ներառյալ այն, ինչ ստեղծում է մարդը պատմության ընթացքում, ինչ նշանակալի է մարդու համար» [9, էջ 369]: Ս. Լ. Ռուբինշտեյնն արժեքը դիտում է որպես մարդու համար աշխարհում ինչ-որ բանի նշանակալիություն, միայն ընդունելի արժեքը կարող է կատարել կարևոր արժեքային գործառույթ՝ վարքի կողմնորոշիչի գործառույթը [9]:

Բ.Գ.Անանևի կարծիքով անձի սոցիալական դերերի և արժեքային կողմնորոշումների համակարգը ձևավորվում է նրա սոցիալական կարգավիճակով: Դերերը, կարգավիճակը և արժեքային կողմնորոշումները Բ.Գ.Անանևի խոսքերով, ձևավորելով անձնային որակների առաջնային դաս, որոշում են վարքի կառուցվածքի և մոտիվացիայի առանձնահատկությունները և դրանց հետ համագործակցության մեջ՝ մարդու բնավորությունը և հակումները [1, c. 210]:

Բ. Գ. Անանևի կարծիքով՝ արժեքային կողմնորոշումների ձևավորման համար մի կողմից հիմք են ծառայում ձևավորված անձնային հատկությունները: Դրանցից առավել կարևոր են այն հատկությունները, որոնք կապված են ակտիվության, գործունեության արտաքին օբյեկտներին ուղղվածության հետ: Այս անձնային հատկությունները պայմանավորում են կյանքի և մշակութային արժեքները յուրացնելուն, ապրելուն ու վերարտադրելուն ուղղված վարքը: Մյուս կողմից՝ արժեքների և մոտիվացիայի բոլոր ոլորտները պայմանավորված են անձի հասարակական կայացումով, այսինքն՝ կրթության և դաստիարակության ընթացքում հասարակական փորձի և մշակույթի յուրացման արդյունքում որոշակի դերերի, գործառույթների ամբողջությամբ [3]:

Արժեքը Մ. Ռոկիչը սահմանում է որպես «կայուն համոզմունք այն բանում, որ վարքի որոշակի ձևը կամ գոյության վերջնական նպատակը նախընտրելի է անձնական կամ սոցիալական տեսակետից, քան վարքի հակադիր ձևը, կամ գոյության վերջնական նպատակը»:

Մ. Ռոկիչի կարծիքով մարդկային արժեքները բնութագրվում են հետևյալ հիմնական հատկանիշներով.

- արժեքների ընդհանուր թիվը, որոնք մարդու սեփականությունն են, սահմանափակ է,
- բոլոր մարդիկ ունեն միևնույն արժեքները, սակայն տարբեր աստիճանով արտահայտված,
- արժեքները կազմակերպված են համակարգի մեջ,
- մարդկային արժեքների աղբյուրները կարելի է տեսնել մշակույթի մեջ, հասարակությունում և դրա ինստիտուտներում,
- արժեքների ազդեցությունը տեսանելի է գրեթե բոլոր սոցիալական երևույթներում [3]:

Համամարդկային փորձը յուրացնելու խնդիրը մանկավարժական հոգեբանության շրջանակներում լուծել է Ա.Ն. Լեոնտևը. «Մարդը իր կյանքի ընթացքում յուրացնում է մարդկության փորձը, նախորդ սերունդների փորձը, դա տեղի է ունենում դրանց նշանակությունը յուրացնելու ձևով և այն յուրացնելու չափով» [4]: Սակայն այդ նշանակությունները բացահայտելու համար համապատասխան գիտելիքներ ունենալը բավարար չէ, անհրաժեշտ է, որ յուրացման գործընթացում այդ մտքերը և գիտելիքները ներքնայնացվեն, սկսեն որոշել աշխարհի հանդեպ վերաբերմունքը: Տվյալ գիտելիքի, նշանակության յուրացման գործընթացը անպայման ենթադրում է բացահայտել, թե «տվյալ մարդու համար ինչ են դառնում այս կամ այն մտքերը և գիտելիքը, որը նրան հայտնում են» [4 c. 237], այսինքն՝ ինչ իմաստ են ձեռք բերում նրա համար:

Վ. Ա. Յադովի անձի դիսպոզիցիոն ձևաչափի համաձայն՝ արժեքային կողմնորոշումների ձևավորումը կախված է այն հասարակության և սոցիալական խմբերի կենսագործունեության որոշակի սոցիալական, պատմական ձևից, որոնց պատկանում է անհատը և որոնց հետ իրեն նույնականացնում է, հետևաբար, որոնց աշխարհայացքը, մտածելակերպը, գաղափարախոսությունը կիսում է: Այսպիսով, Յադովի կարծիքով՝ արժեքային կողմնորոշումների համակարգը ձևավորվում է համընդհանուր սոցիալական պայմաններին համապատասխան, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել որոշակի անհատական և սոցիալական արժեքներ: Արժեքային կողմնորոշումների համակարգը, արտացոլելով կենսապայմանները, հանդիսանում է անձի աշխարհայացքի բաղադրիչներից մեկը [12]:

Կարելի է փաստել, որ չնայած տարբեր փորձարարական հետազոտություններին, արժեքային կողմնորոշումների ամբողջական հիերարխիայի հիման վրա տիպաբանության կառուցումը, որը հաշվի է առնում դրանց համակարգի դինամիկ բնույթը, բավականաչափ մշակված չէ: Անձի արժեքային կողմնորոշումները տարատեսակ մեկնաբանություն ունեն տարբեր հեղինակների աշխատություններում: Մի շարք հետազոտություններում «անձի արժեքային կողմնորոշում» հասկացությունը համընկնում է մոտիվացիոն-պահանջմունքային կամ իմաստային ոլորտը բնութագրող տերմինների հետ: Ինչպես օրինակ՝ Ա. Մասլոուն փաստացի չի տարբերակում «արժեք», «պահանջմունք» և «մոտիվ» հասկացությունները, իսկ Վ. Ֆրանկլը՝ «արժեքը» և «անձնային իմաստը»:

Այսպիսով, արժեքներն իրենցից ներկայացնում են հատուկ հոգեբանական կազմավորումներ, որոնք հիերարխիկ համակարգ են կազմում և գոյություն ունեն անձի կառուցվածքում որպես նրա բաղադրիչներ: Հնարավոր չէ պատկերացնել այս կամ այն արժեքին անձի ուղղվածությունը որպես մեկուսացված կազմավորում, որը հաշվի չի առնում համակարգում չներառված արժեքների հանդեպ դրա սուբյեկտիվ կարևորությունը: Արժեքը կարող ենք ներկայացնել որպես անձի և հասարակության փոխազդեցության հետևանք. յուրացնելով հասարակությունում տարիների ընթացքում ձևավորված ու ընդունված արժեքները՝ անձը ներքնայնացնում է դրանք: Ներքնայնացված արժեքներն անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունների հետ զուգադրման արդյունքում ստեղծում են նոր արժեքներ ու ներմուծում դրանք հասարակություն: Այսպիսով, արժեքների ձևավորումը կարող ենք ներկայացնել որպես երկկողմ գործընթաց, որտեղ հասարակությունն ազդում է անձի արժեքների ձևավորման վրա, սակայն անձն էլ իր հերթին նպաստում է հասարակության արժեքների փոխակերպմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. ***Ананьев Б. Г.,*** О проблемах современного человекознания. - М.: Наука, 1977. - 344 с.

2. ***Выготский Л. С.,*** Педагогическая психология / под ред. В. В. Давыдова. - М.: Педагогика-Пресс, 1996. - 536 с.

3. ***Журавлева Н. А.,*** Психология социальных изменений: ценностный подход. - М.: –зд-во «Институт психологии РАН», 2013. – 524 с.

4. ***Леонтьев А. Н.,*** Деятельность. Сознание. Личность. М., 1975.

5. ***Маслоу А.,*** Психология бытия: Пер. С англ. - М.: Рефл-бук; Киев: Ваклер, 1997. - 304 с.

6. ***Маслоу А.,*** Самоактуализация // Психология личности. Тексты / под ред. Ю. Б. Гиппенрейтер, А. А. Пузырея. -М.: Изд-во МГУ, 1982. - С.208-118.

7. ***Оллпорт Г.,*** Личность в психологии: Пер. С англ. - М.: КСП+; СПб.: Ювента, 1998. - 345 с.

8. ***Роджерс К.,*** Клиентоцентрированная терапия: Пер. С англ. - М.: Рефл-бук; Киев: Ваклер, 1997. -320 с.

9. ***Рубинштейн С. Л.,*** Проблемы общей психологии.2-е изд. - М., 1976. - 416 с.

10. ***Франкл В.,*** Человеквпоисках смысла: Пер. С англ. И нем. - М.: Прогресс, 1990. -368 с.

11. ***Фромм Э.,*** Анатомия человеческой деструктивности: Пер. С англ. - М., 1994. - 447 с.

12. ***Ядов В. А.,*** Социальная идентификация в кризисном обществе // Социол. журн. - 1994. - № 1. - С.35-52.

13. ***Яницкий М. С.,*** Ценностные ориентации личности как динамическая система. Кемерово: Кузбассвузиздат, 2000. - 204 с.

14. ***Frankl V. E.,*** Man’s search for meaning: The classic tribute to hope from the Holocaust. Rider, UK, 2004, p. 147.

НАНЕ ЗЕЙНАЛЯН
Аспирант Академии государственного управления Республики Армения

ПОНЯТИЕ ЛИЧНОСТНОЙ ЦЕННОСТИ В ТЕОРИЯХ ЛИЧНОСТИ

В статье представлены различные интерпретации понятия личностной ценности, а также особенности и проблемы его формирования. Уделяется особое внимание вопросу ценностей в гуманистической и экзистенциальной теориях личности.

Ключевые слова: личностные ценности, ценностная система, ценностные ориентации.

NANE ZEYNALYAN
PhD Student of the Public Administration Academy of the Republic of Armenia

THE UNDERSTANDING OF PERSONAL VALUE IN THE PSYCHOLOGICAL THEORIES OF PERSON

In the article presented different interpretations of the concept of personal value, peculiarities and issues of its formation. Focusing particularly on the issue interpreted in humanistic and existential theories of person.

Keywords: personal values, value system, value orientation.

Ներկայացվել է խմբագրություն 25.01.2017 թ.